ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Որոշում
25 սեպտեմբերի 2019 թվականի N86Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ և 68-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N202-Ն որոշմամբ հաստատված կարգը,

որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2018 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների չափը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ մինչև 2019 թվականի հոկտեմբերի 1-ը սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել շահութաբաժնի առկա պարտավորությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

25 09 2019

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 25
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ. սեպտեմբերի 25-ի N86Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների 2018 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով Հայաստան Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների գումարի չափը

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	ՀՀ 2019թ. պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարն՝ ըստ կանոնադրական կապիտալում պետության բաժնեմասի (ՀՀ դրամ)
1	«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ	-
2	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	-
3	«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ	98000
4	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	-
5	«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ	683500
6	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ	192000
7	«Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	2951000

25.09.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: ADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղալալ՝ Գ. Թադևոսյան